ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Կոտայքի մարզի «Նոր Հաճնի N 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (տղաների խումբ) / 8 ժամ / և ինֆորմատիկայի / 8 ժամ / ուսուցչի թափուր տեղերի համար :

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև1 /: Փաստաթուղթ / դիպլոմ / ՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի համապատասխան որակավորման վերաբերյալ,
2. Անձնագրի պատճենը
3. Ինքնակենսագրություն /Ձև 4/
4. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները / դրանց առկայության դեպքում /,
5. Մեկ լուսանկար 3X4 չափի,
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **Նոյեմբերի 13-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **Նոյեմբերի 16** -ին ՝ ժամը 13:00-ին, Կոտայքի մարզի Նոր Հաճնի N 3 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Նոր Հաճն, Է. Տոռոզյան 11:

Տեղեկությունների համար զանգահարել՝ / 0224 / 4-30-45 կամ /094/ 95-93-90 հեռախոսահամարներով: